



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Երեքշաբթի, 12  
Հոկտեմբերի յետմիջօրեին,  
Թեմիս բարեխնամ  
Առաջնորդ Բարձր. Տ.  
Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
ընդունեց այցելութիւնը  
Հայկական Ոսկրածուծի  
Հիմնադրամի վարչութեան  
Ներկայացուցիչներուն՝  
Տոքթ. Վերժին Մատենլեանի  
եւ Տիկին Արփի  
Քեսթեանի, որոնք Ազգ.  
Առաջնորդարան եկած էին  
Առաջնորդ Սրբազանը

տեղեակ պահելու Հիմնադրամի անմիջական ծրագիրներուն:

Յարգելի հիւրերը Առաջնորդ Սրբազանին յայտնեցին, թէ Շաբաթ, 13  
Նոյեմբերին, Կլենտոյլի մէջ տեղի պիտի ունենայ մարդասիրական այս  
կազմակերպութեան տարեկան քայլարշաւը, որ կը կրէ «Կեանքի Արշաւ»  
խորագիրը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հայկական Ոսկրածուծի  
Հիմնադրամին մարդասիրական ու ազգանուէր ծառայութիւնները, վեր  
առնելով դժուար բուժելի հիւանդութիւններու դարմանումին ի խնդիր անոր  
ճիգերը: «Մեր ժողովուրդի գաւակները պետք է քաջատեղեակ ըլլան, որ  
Հիմնադրամի գանձանակին մէջ ձգուած իւրաքանչիւր լումայ, այս  
քայլարշաւին առնուած իւրաքանչիւր քայլ՝ յաւելեալ կաթիլ մը վառելանիւթ  
կը բերէ Հիմնադրամի ազգօգուտ գործին, հետեւաբար, կը քաջալերենք, որ  
մասնակցութիւնը ըլլայ խիտ շարքերով», ըսաւ Առաջնորդ Սրբազանը:

Յիշեցնենք, որ Տոքթ. Վ. Մատենլեան մօտաւորապէս երկու շաբաթ  
առաջ ոսկրածուծի փոխ-պատուաստումի մասին դասախօսած էր Ազգ.  
Առաջնորդարանի սրահին մէջ, Տիկնանց Օժանդակ Մարմինին  
կազմակերպած ձեռնարկին, որ մաս կը կազմէր Հայ Կնոջ Տարուան  
Նուիրուած ձեռնարկներուն շարքին:

## **PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM THE ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY**

On Tuesday, October 12<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Bone Marrow Donor Registry (ABMDR) Dr. Vergine Madenlian and Mrs. Arpi Kestenian.

The guests informed the Prelate of the endeavors the organizations has planned for the remainder of the year, specifically the annual Walk of Life which will be taking place on Saturday, November 13<sup>th</sup>.

The Prelate commended the representatives and all the volunteers of the ABMDR for their humanitarian service, and calls on the community to participate in the walk-a-thon and contribute to the life-saving efforts of the organization.